ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650200
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am
N_____

------- ----------2022 թ

https://jam-news.net ԵՎ iwpr.net ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՅՔԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹՂԹԱԿԻՑ ԳԱՅԱՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հոկտեմբերի 19-ի N Մ-13552-2022 հարցմանը՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետևանքով Վարդենիս համայնքի տարածքում տուժած բիզնեսի վերաբերյալ ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի կողմից կատարվել է ուսումնասիրություն: Կատարված ուսումնասիրությունից պարզվել է, որ՝

-Սոթք բնակավայրում տուժել են մեկ սրճարան-ճաշարան, մեկ խանութ, մեկ ավտոլվացման կետ:

-Գյուղատնտեսության ոլորտում մեկ բնակիչ չի կարողացել հավաքել կարտոֆիլի բերքը, քանի որ 36 արկ է ընկել հողատարածք, մեկ այլ բնակչի մոտ՝ մասնակի է տուժել կարտոֆիլի դաշտը:

-Անասնապահության ոլորտում սատկել են մեկ ընտանիքի 2 գլուխ կովերը և 10 գլուխ ոչխարները, երկու ընտանիքի մոտ սատկել են խոզերը: Հինգ ընտանիք չի կարողացնել խոտհարքից բերել հավաքած խոտի հակերը, որոնք ընդհանուր կազմում են շուրջ 2000 հակ խոտ:

-Վարդենիսի համայնքապետարանի համապատասխան հանձնաժողովը մարզպետարանի մասնագետների անմիջական օգնությամբ կատարել է 151 վնասված բնակելի շենքերի գույքագրում:

-Ագրեսիան իր բացասական հետևանքն է ունեցել նաև զբոսաշրջոըության ոլորտի վրա՝ կտրուկ նվազել կամ դադարեցվել են զբոսաշրջության հոսքերը: Տեղեկացնում եմ, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Հայաստանի ներդրումային խորհրդի համագործակցությամբ, ինչպես նաև Գեղարքունիքի մարզպետարանի աջակցությամբ ներկայումս մշակվում է ծրագիր Գեղարքունիքի մարզում զբոսաշրջային հոսքերը խթանելու և ծառայություններ մատուցող/մասնավորապես հյուրանոցային ծառայություններ մատուցող/ անձանց աջակցելու նպատակով:

Հարգանքներով՝

X

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

ՌՈՒԲԻԿ ՆԱՎՈՅԱՆ

ՏԻ և ՀԳՄՀ վարչություն
Կատարող՝ Խ. Սուչյան
Հեռ՝. 077 77 91 27